Հաշվետվություն

2018 թվականի հոկտեմբերի 18-20-ը Իտալիայի Հանրապետություն (Վենետիկ) գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

   Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

   ՀՀ առաջին փոխվարչապետի պաշտոնակատար

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

   Վենետիկ՝ 2018թ. Հոկտեմբերի 18-20-ը

4. ***Գործուղման նպատակը***

   Եվրոպայի Խորհրդի <Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի> (Վենետիկի Հանձնաժողով) հրավերով Հանձնաժողովի հերթական 116-րդ լիագումար նիստին մասնակցելու և Վենետիկի Հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի հետ հանդիպելու նպատակով:

5. ***Հանդիպումները, քննարկված հարցերը, ձեռք բերված պայմանավորվածությունները***

   2018 թվականի հոկտեմբերի 19-ին Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Արարատ Միրզոյանը հանդիպել է Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյին: Հանդիպման ընթացքում պարոն Միրզոյանը շնորհակալություն է հայտնել կառավարության հետ Վենետիկի հանձնաժողովի արդյունավետ համագործակցության համար:

   Արարատ Միրզոյանը պարոն Բուքիքիոյին տեղեկացրել է, որ Ազգային ժողովի Կառավարության ծրագրում դեռևս մայիս ամսին ամրագրվել է մեկ տարվա ընթացքում

արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու և մինչ այդ Ընտրական օրենսգիրքը փոփոխելու դրույթներ: Առաջին փոխվարչապետի պաշտոնակատարը զրուցակցին տեղեկացրել է նաև, որ օրեր առաջ՝ հոկտեմբերի 16-ին, Վարչապետ Փաշինյանը հրաժարական է ներկայացրել՝ հայտարարելով 2018թ. դեկտեմբերի սկզբին արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու կառավարության մտադրության մասին:

Հանդիպումից հետո Արարատ Միրզոյանը ելույթ է ունեցել Վենետիկի հանձնաժողովի 116-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում: Նա հանձնաժողովին է ներկայացրել ՀՀ Ընտրական օրենսգրքի բարեփոխումների ընթացքը և օրենսգրքի առաջարկվող հիմնական փոփոխությունները:

Առաջին փոխվարչապետի պաշտոնակատարը նաև կիսվել է Հայաստանում ընթացող քաղաքական զարգացումների վերաբերյալ տեղեկատվությամբ, հանձնաժողովին տեղեկացրել վարչապետի հրաժարականի մասին: Պարոն Միրզոյանը մասնավորապես ասել է, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունները կոչված են ամփոփելու մայիս ամսին երկրում տեղի ունեցած ժողովրդավարական խաղաղ հեղափոխությունը, հաղթահարելու գոյություն ունեցող քաղաքական, ինստիտուցիոնալ և սահմանադրական ճգնաժամը՝ ձևավորելով իրապես ներկայացուցչական խորհրդարան, քանի որ գործող Ազգային ժողովը, որն ընտրվել է ընդամենը մեկ տարի առաջ, չի ներկայացնում հայ ժողովրդի քաղաքական կամքն ու նախընտրությունը:

Վենետիկի հանձնաժողովի՝ Հայաստանը ներկայացնող անդամ, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Գագիկ Հարությունյանը հանձնաժողովին հիշեցրել է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կայուն խորհրդարանական մեծամասնության ապահովման դրույթի կարևորությունը և շեշտել, որ այսօր այդ սկզբունքը Հայաստանում խախտված է: Այնուհետև պարոն Հարությունյանը նշել է, որ դեկտեմբերին արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը երկրում ստեղծված ոչ միայն և ոչ այնքան քաղաքական, որքան իրավական-սահմանադրական ճգնաժամի հաղթահարման

միակ ճանապարհն է: Անդրադառնալով փոփոխված օրենսգրքով արտահերթ ընտրություններ անցկացնելու հարցին՝ Գագիկ Հարությունյանը նշել է, որ գործող օրենսգրքով արտահերթ ընտրությունների անցկացումն իր մեջ առավել մեծ ռիսկ է կրում, քան առաջարկվող փոփոխություններով ընտրությունների կազմակերպումը:

Քննարկման արդյունքում Վենետիկի հանձնաժողովի նախագահը, վերահաստատելով Լավագույն պրակտիկայի իր ուղեցույցում ամրագրված ընտրական օրենսգրքի կայունության և ընտրություններից առնվազն մեկ տարի առաջ ընտրական օրենսգրքի փոփոխություններ անցկացնելու մասին ռեկոմենդացիաները, այդուհանդերձ արձանագրել է[1], որ Հայաստանում ստեղծվել է առանձնահատուկ իրավիճակ, և նման պայմաններում, եթե առկա է երկրի քաղաքական ուժերի համաձայնությունը Ընտրական օրենսգիրքը փոխելու վերաբերյալ, Վենետիկի հանձնաժողովը չի խոչընդոտելու երկրի կայուն զարգացման գործընթացին:

Գործուղվող՝

Recoverable Signature

X

Signed by: MIRZOYAN ARARAT 3311790138 Առաջին փոխվարչապետ Ա.Միրզոյան

23.10.2018թ.

[1] https://www.venice.coe.int/webforms/events/?id=2657